

THE ROLE OF THE INFORMATION GUIDE BOOK IN PRESERVING CULTURAL HERITAGE AND MAKING THEM POPULAR

A. S. KHACHATRYAN

Taking into account the progress of the modern information technologies and the possibilities of providing effective information it is suggested to create national information guide book of Armenian cultural heritage which will create conditions for super fast availability and access and will make easier the control and systematization of the field.

ԿԱՊԱՆ ԵՐԿԻՐՆ ԸՍՏ ՏԱԹԵՎԻ ՊՏՂԻ ՑՈՒՑԱԿԻ

Ա. Յ. ԴԱՐԱՊՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Մատենադարանում պահվող Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության որոշ ձեռագրերում ավելացված է Տաթևի վանքին հարկատու գյուղերի մի նոր ցուցակ: Օգտվելով Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» հրատարակությունից, Ա. Գ. Աբրահամյանը տեղավորել է այդ ցուցակը նրա հավելվածում՝ վերցնելով N 6271 ձեռագրից: Ցուցակում նշված է Տաթևի թեմի 14 գավառների գյուղերից ստացվող «պտուղ» և «տասանորդ» հարկերի քանակը: Հավելվածում տեղ է գտել նաև Գեղարքունյաց մելիքների Տաթևի վանքին տրված Ղաբալան:¹

Տաթևի թեմի պտղի ցուցակում նշված 14 գավառների ընդհանուր տարածքն իրենից ներկայացնում էր Ջանգեզուրի, Ղարաբաղի և Ղարադաղի լեռնաշղթաների ու եռակատար սարավանդի հյուսիսային եզրի միջև պարփակված մի ընդարձակ հայաբնակ երկրամաս, որը հայտնի էր Ղափան (իմա՝ Կապան) անունով:² Նշված երկիրը լեռնոտ և կտրտված տարածաշրջան է:

Երկրամասի համար տնտեսական կարևոր նշանակություն է ունեցել Արաքսի հովտով անցնող տարանցիկ ուղին, որին այն միանում էր Նախիջևանում:³ Երկ-

¹ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրպէլեանի, Ե., 1942, հավելված, էջ 41-45: Տաթևի թեմի պտղի ցուցակը վերաբերում է 1702-1720 թթ., սակայն, ամենայն հավանականությամբ, արտացոլում է նաև 17-րդ դ. երկրորդ կեսի իրավիճակը: Ըստ Յ. Հովսեփյանի՝ այդ ցուցակը վերաբերում է 16-րդ դ. սկզբներին, որովհետև արտագրված է 1513 թ. ձեռագրից (**Յ. Հովսեփյան**, Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Եր., 2009, էջ 141-142):

² Այդ անվան տակ առ այսօր հասկացվում էին տարբեր մեծության տարածքային երկու միավորներ՝ բուն Ղափան (Փոքր Ղափան) և Մեծ Ղափան, որը կոչվել է նաև «Յոթնաբերդ գավառ» (**Թ. Խ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր, 1984, էջ 365): Ըստ պարսկական աղբյուրների՝ Ղափանաթ (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն , հ. 4, Եր., 1972, էջ 190, ծան. 116):

³ Հայ ժողովրդի պատմություն, էջ 82: 18-րդ դ. առաջին քառորդի դրությամբ Նախիջևանը

րամասը Արաքսի հովտով անցնող մայրուղու միջոցով կապը տարածաշրջանի խոշոր կենտրոնների հետ պահպանել է իր պատմության ողջ ընթացքում:⁴ Դա պայմանավորված էր աշխարհագրական գործոնով:

Դարերի ընթացքում երկրամասի տարածքում ձևավորվել էր պաշտպանական մի կուռ համակարգ, որն ապահովում էր վարչատնտեսական, հոգևոր-մշակութային և քաղաքական խոշոր կենտրոնների անվտանգությունն ու միաժամանակ ապաստան է հանդիսացել տեղի ազգաբնակչության համար:⁵ 17-րդ դ. վերջին և 18-րդ դ. առաջին քառորդին այդ համակարգն այլևս չէր գործում: Շատ բերդ-ամրոցներ կործանվել էին կամ կորցրել իրենց երբեմնի նշանակությունը: Գործող բերդ-ամրոցներն այնքան էլ շատ չէին և հանդիսանում էին պարսկական տիրապետության հենակետեր:⁶ Այդ պատճառով Դավիթբեկյան ազատագրական պայքարի ընթացքում վերակառուցվեցին և պաշտպանական կառույցների վերածվեցին Շնհերի կուսանաց և Հալիծորի անապատները:⁷

Ըստ Արևելյան Հայաստանի վարչական բաժանման՝ Կապան երկիրն ընդգրկված էր Թավրիզի բեկլարբեկության կազմի մեջ:⁸ Տաթևի թեմը կազմող գավառներն ունեին իրենց կառավարիչները՝ մելիքները, որոնք հին ավատական տների շառավիղներ էին:⁹ Սիսիան, Ջանկեզուր, Քաշաթաղ, Բարկուշատ, Կաքավաբերդ գավառներում ավատական ոստաններ էին Անգեղակոթ, Դարբաս, Սիսիան,

և նրան հարող շրջանները եղել են հայաբնակ (տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, Սի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953, էջ 84):

⁴ Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Եր., 1936, էջ 17-172: **Նույնի՝** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен / V в. до н. э./, Ереван, 1954, с. 153-159, **Թ. Խ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 77-78:

⁵ **Ա. Ղարազոյան**, Սյունիքի հարավարևելյան մասի ճանապարհները, ՊԲՀ, 1980, N 2, էջ 263-268, **Նույնի՝** Сюник, Нахчаван и Гохтн /историко-географические исследования, Ер., 2002, с. 86-93.

Ըստ եղած տեղեկությունների՝ դրանք էին Որոտան, Ջեյվա, Բարկուշատ բերդերը Կապանում (տե՛ս Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց» (այսուհետև՝ Դաւիթ Բէկ), Վեներտիկ, 1978, էջ 124, 133, 135, 152, 153, 157): Ղարաղաղի սահմաններում գտնվող 5 բերդերից հատկապես կարևոր նշանակություն են ունեցել երկուսը՝ Բուրգեր կամ Աղջաղալա և Կուր-Դեշտ ամրոցները, քանի որ առաջինը գտնվում էր Թավրիզից դեպի Ղարաղաղ (**Հ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 80), իսկ երկրորդը՝ Ղարաղաղից դեպի Մեղրի տանող ճանապարհներին:

⁶ Ըստ եղած տեղեկությունների՝ դրանք էին Որոտան, Ջեյվա, Բարկուշատ բերդերը Կապանում (տե՛ս Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց» (այսուհետև՝ Դաւիթ Բէկ), Վեներտիկ, 1978 էջ 124, 133, 135, 152, 153, 157): Ղարաղաղի սահմաններում գտնվող 5 բերդերից հատկապես կարևոր նշանակություն են ունեցել երկուսը՝ Բուրգեր կամ Աղջաղալա և Կուր-Դեշտ ամրոցները, քանի որ առաջինը գտնվում էր Թավրիզից դեպի Ղարաղաղ (**Հ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 80), իսկ երկրորդը՝ Ղարաղաղից դեպի Մեղրի տանող ճանապարհներին:

⁷ **Մ. Ս. Հասրաթյան**, Սյունիքի 17-18-րդ դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 117: Շնհերի Ս. Աստվածածին ամուճով անապատը կառուցվել է 1676 թ. Ագուլիսից գաղթած կույսերի կողմից (**Ե. Լալայեան**, Ջանգեզուրի գաւառ, Խ. Բ. Թիֆլիս, 1899, էջ 42):

⁸ Հայ ժողովրդի պատմություն, էջ 251:

⁹ **Ա. Գ. Բարխուդարյան**, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի (Բանբեր Մատենադարանի, N 8, Եր., 1967, էջ 222):

Վաղատին, Գորիս, Վերի Շեն, Շինուհայր, Տաթև, Տեղ, Խնձորեսկ, Խանածախ, Արծվանիկ, Եղվարդ, Կարճևան բնակավայրերը:¹⁰ Ընդ որում, 17-րդ դարի և 18-րդ դարի առաջին կեսի մելիքություններից համեմատաբար նշանավորը չորսն էին՝ Անգեղակոթինը, Քաշաթաղինը (կենտրոնը Խնածախ գյուղը), Տաթևինը և Բեխինը:¹¹

Ղարաղաղի գավառում ավատական ոստաններ են եղել Սարդու, Գանձառի, Օղա, Գիրմնավն, Ղասումաշեն, Օրավ Քալա, Նորաշեն բնակավայրերը:¹² Կապանի մելիքությունները խոշոր դեր են խաղացել 18-րդ դարի ազատագրական պայքարում:

16-17-րդ դդ. հայկական ավատական ինքնուրույն իշխանություններ էին պահպանվել նաև երկրամասի հարևանությամբ գտնվող Գողթնում ու Յին Ջուղայում, ինչպես նաև Գեղարքունիքում և Վայոց Ձորում,¹³ որտեղ աչքի ընկնող ավատական ոստաններ էին Ջող, Բասարգեշար, Մազրա, Փառակունք, Կոթ, Դաշքենդ, Եղեգնաձոր, Մալիշկա, Մոզն, Մարտիրոս բնակավայրերը:¹⁴

Մելիքներն իրենց տրամադրություն տակ ունեին ռազմական ջոկատներ, որոնք «... հսկում էին ենթակա գյուղերի ներքին կարգապահությունը և հարկ եղած դեպքում զինական պարտավորություններ կատարում»:¹⁵

Մելիքությունները կարևոր դեր են խաղացել տարածաշրջանի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում: Նրանք կարողանում էին կազմակերպել տեղական բնակչության պաշտպանությունը քոչվոր ցեղերի պարբերաբար կրկնվող ավազակային հարձակումներից:¹⁶ Ներքին կյանքում լինելով ինքնուրույն, մելիքները կառավարում էին «հայկական տեղական սովորությանը օրենքների համաձայն, ժողովրդից ընտրված և իրենց կողմից հաստատված տանուտերերի միջոցով»:¹⁷ Պետական հարկերը գանձվում էին տեղական պաշ-

¹⁰ **Ն. Ծ. Պապուխյան**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1972, էջ 21, մասն 11, **Ե. Լալայեան**, Ջանգեզուրի գավառ, հ. Բ, էջ 8:

¹¹ **Ս. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 8: XVII դ. Անգեղակոթը գյուղաքաղաք էր (տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վեներտիկ, էջ 216): 1699 թ. գումարված գաղտնի ժողովին ներկա էին երկրամասի 10 մելիքներ: 1703 թ. նրանցից 8-ը մասնակցել է Գանձասարում կայացած մելիքների հավաքին (տե՛ս **Լեո**, Երկեր, հ. Ա, Եր., 1973, էջ 46, 92): Մելիք Հայկազյանների ոստան Խնածախը հայտնի էր որպես արհեստագործական և առևտրական կենտրոն (**Ն. Ծ. Պապուխյան**, նշվ. աշխ., էջ 21, ծան. 11):

¹² **Ե. Ֆրանգյան**, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 98: **Հ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 40:

¹³ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Եր., 1972, էջ 89, 165:

¹⁴ **Ն. Ծ. Պապուխյան**, նշվ. աշխ., էջ 21, մասն 2-րդ, **Ս. Գ. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 203, 214:

¹⁵ Հայ գործերի թվաքանակը հասնում էր «... երեք-չորս տասնյակ հազարի, իրենց շարքերում հաշվելով 30 հազար ձիավոր և 10 հազար հետմակ զինապարտ» (Հայ ժողովրդի պատմություն, էջ 151): Ընդ որում, միայն Արցախի մելիքները միասնաբար կարող էին դուրս բերել 10-12 հազարանոց բանակ (տե՛ս **Ա. Մաղալյան**, Արցախի մելիքությունները և մելիքական տները 17-19-րդ դդ., Եր., 2007, էջ 9):

¹⁶ **Ս. Գ. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 191:

¹⁷ Նույն տեղում:

տոնյաների կողմից «ազատ պետական հարկահավաքների ոչ մի օրենք չճանաչող կեղեքումներից»:¹⁸ Բացի այդ, մելիքությունների սահմաններում պահպանվում էին ճարտարապետական կոթողները, հայ քարագործ վարպետների ավանդները, իսկ «գրչության ռահվիրաները հանգրվան էին գտնում այդպիսի կիսանկախ վայրերում՝ շարունակելու հայ մտքի մարելու հասած առկայծումը»:¹⁹

Թուրք-իրանական երկարատև պատերազմները, որոնք հիմնականում ընթանում էին Հայաստանի տարածքում, մեծապես հյուծել էին երկիրը: Ձանգվածային կոտորածների և արտագաղթների հետևանքով նվազել էր բնակչության թվաքանակը, անկում էին ապրել երկրի արտադրական ուժերը: Հաստատված խաղաղությունը բարերար ազդեցություն ունեցավ: Բարելավվեց երկրի ներքին դրությունը: Վերաշինվեցին ավերված բնակավայրերը, վերականգնվեցին ճանապարհները, ջրանցքները, սկսեց աշխուժանալ առևտուրը: Տնտեսական կյանքն առաջադիմեց: Վերահավաքվեց և կենտրոնացավ բնակչությունը:²⁰

1639 թ. թուրք-պարսկական հաշտությունից հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև Մեծ Ղափանի երկրի տնտեսական և մշակութային կյանքի աշխուժացման համար: Ծավալվեցին շինարարական աշխատանքներ, վերակառուցվեցին վանքերն ու եկեղեցիները, կառուցվեցին ճարտարապետական նոր համալիրներ:²¹ 17-րդ դ. երկրորդ կեսից մեզ են հասել ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ:²² Հատկապես շատ են եկեղեցական շինությունները՝ անապատները և եկեղեցիները: Աշխարհիկ շինություններից (ամրոցներ, ապարանքներ, կամուրջներ, իջևանատներ) պահպանվել են քիչ թվով կառույցներ, այն էլ՝ մեծամասամբ, կիսավեր վիճակում: Համեմատաբար լավ են պահպանվել արտադրական բնույթի շինությունները (ջրաղացներ, ձիթհաններ, հնձաններ):

17-րդ դարի երկրորդ կեսին երկրամասում լայն տարածում ստացավ վանք-ամրոցների կառուցումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 17-18-րդ դարերում երկրամասի պաշտպանական կառուցվածքները բաժանվում էին երկու խմբի՝ վանք-ամրոցների (Տաթևի Մեծ անապատ, Հալիձորի բերդ, Տաթևի վանք) և բերդերի:²³ Դրանցից շատերը (Բաղաբերդ, Գեղի, Որոտն, Բարկուշատ, և այլն) գոյություն են ունեցել դեռևս վաղ միջնադարում:²⁴ Վանք-ամրոցների առաջացումը Հայաստանում պայմանավորված էր պետականության կորստով,

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Հ. Խ. Նաջարյան**, 1699 թվականի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Եր., 1969, էջ 34-35:

²¹ **Մ. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 7: 17-րդ դ. համալիրներում եռանավ բազիլիկայի հորինվածքով են կառուցված Տաթևի Մեծ Անապատի, Շնիերի կուսանաց, Հալիձորի հարանց, Մանլիկ անապատների եկեղեցիները (նույն տեղում, էջ 69):

²² Արտադրական բնույթի շինություններ կարելի է տեսնել Կապանի շատ բնակավայրերում:

²³ **Մ. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 117:

²⁴ Տե՛ս **Ա. Ա. Карагезян**, указ. соч., с. 41-42, 43-46, 89.

երը «Վանքերը սկսեցին իրենք մտածել սեփական անվտանգության ապահովման մասին»:²⁵ Երկրամասի հոգևոր-մշակութային կյանքում զգալի դեր է խաղացել Տաթևի Մեծ Անապատը: 1610 թ. Արարատյան երկրից Սարգիս Եպիսկոպոսը և քահանա Կիրակոս Տրապիզոնցին այստեղ հիմնում են միաբանություն և գրասիրությունը տարածում շրջաններում:

Տաթևի Մեծ Անապատում են գործել վարդապետներ Ներսես Մոկացին և Մելիքսեթ Վժանացին, Մովսես Խոտանանցին և Պողոս Մոկացին:²⁶ Սյունյաց դպրոցի սաները հինադրեցին Լիմի, Սևանի, Տանձափարախի, Չարեքագետի, Նոր Զուղայի, Երևանի «և այլ բազմաթիվ անապատներ, որոնցից յուրաքանչյուրը դարձավ այդ վայրի մշակութային կենտրոնը»:²⁷

Դատելով Լորից, Ըղվերձից, Մրուցից, Գետաթաղից, Տաթևից, Խոզնավարից, Խանածախից, Բեխից, Խոտանանցից, Եղնկյանից, Շնհերից, Արիստակա անապատից (Տանձափարախի վանք)²⁸ մեզ հասած ձեռագրերից, նշված վայրերում ծաղկել է գրչության արվեստը:²⁹

17-րդ դարի երկրորդ կեսին, տնտեսական նոր վերելքի պայմաններում, երկրամասում զարգացում ապրեց վանական կալվածատիրությունը: Տաթևի թեմը կազմող 14 գավառների գյուղերից ստացվող հարկերի (պտուղ, հուլավր) քանակը վկայում է, որ Տաթևի վանքը եղել է Հայաստանի խոշոր հողատեր-կալվածատերերից մեկը:³⁰ Հայ պատմիչները, որոնք «17-րդ դարի առաջին քառորդը ներկայացնում էին որպես Արևելյան Հայաստանի ավերման պատմություն, նույն դարի երկրորդ և երրորդ քսանհինգամյակները բնութագրում են որպես նրա նորոգման պատմություն»:³¹

Նշված ժամանակաշրջանում ավելացել էր նաև Կապանի և հարևան երկրամասերի հայ ազգաբնակչության քանակը: Կապանի և Ղարաբաղի հայությունն ազատագրական շարժումների ժամանակ ավելի քան մեկ միլիոն էր: Ուստի

²⁵ **Մ. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 118:

²⁶ **Լեո**, Երկեր, հ. 3, եր., 1969, էջ 268: Հիշատակելի է, որ «Ներսես Մոկացու մահից հետո (1627 թ.) դպրոցի ղեկավարությունն (1627-1346) անցնում է Ստեփանոս Մոկացու (Շատախեցու) ձեռքը» (Հայ ժողովրդի պատմություն, էջ 445):

²⁷ **Մ. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 18:

²⁸ Տե՛ս **Մ. Մ. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 46:

²⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժե դար, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974, էջ 579, 642, 686, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1978, էջ 143, 154, 556, 607, 705, 808, 826, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժե դար, հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1984, էջ 15, 212, 256, 261, 318, 420, 506, 515, 759, 814, 822, 823, 824, 860, 881, 934, 938:

³⁰ Ղ. Ալիշանն անդրադառնալով Տաթևի թեմի պտղի ցուցակին, գրում է. «... տակալին ի յետին դարս՝ ոչ փոքր է թիւ գիւղիցն, այն է 260, բաժանեալ փոփոխեալ են, և կոչի Տաթեւոյ թեմի պտուղ և հաշուին պարսիկ շահի դրամով, որոց գումար՝ եթէ ստոյգ է գրածն՝ հաւաքի ի մեծաքանակ թիւ 580 կամ 600000» (**Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 242): Նշանավոր հայագետի ուսումնասիրության համաձայն՝ շահի դրամ Պարսից համարի՝ այժմ 0,25 ֆրանկ: «Բարկուշատայ գաւառի բերքն չափով արմըտեաց դինն (մարգպան և չարեք), և յաւելուն նոսին թիւք հարիւրաւորք, որ հաւանօրէն շահի են» (նույն տեղում, էջ 242, ծան 1):

³¹ Հայ ժողովրդի պատմություն էջ 108:

«բնական է, որ ազատագրական շարժումներն ավելի ուժեղ արտահայտվեցին այնտեղ, ուր շատ էր հայ ժողովուրդը՝ Սյունիքում (իմա՝ Կապան) և Ղարաբաղում»:³²

17-րդ դարի առաջին քառորդին Կապան երկիրը ունեցել է կես միլիոնից ավելի հայ ազգաբնակչություն:³³ Միայն Տաթևի թեմի պտղի ցուցակում նշվել է երկրամասի 14 գավառների 260 հայաբնակ գյուղ:³⁴ Դա այն դեպքում, երբ տեղագրական հետազոտությունը ցույց է տալիս, որ շատ գյուղեր տեղ չեն գտել ցուցակում՝ հավանաբար վանքապատկան լինելու պատճառով: Եկվոր տարրը, որը նստակյաց կյանք էր վարում, փոքրաթիվ էր և կենտրոնացած էր նախկին Սյունիքի հարավարևելյան մասի մի քանի գյուղերում, որոնք ժամանակին եղել են հայաբնակ:³⁵

Արդեն 17-րդ դարի առաջին քառորդի դրությամբ այդ քրդական և թրքախոս ցեղերը (ղարաչոռլու, օթուզիք, ջիվանշիր)³⁶ «օտար տիրակալների և ինքնուրույնության ձգտող քոչվոր վերնախավի ռազմական հենարաններն էին»:³⁷ Հետևաբար պատահական չէ, որ 18-րդ դարի ազատագրական պայքարի ժամանակ հայկական ուժերի առաջին հարվածն ուղղված էր այդ ցեղային միավորումների դեմ: Շուտով օտար տարրերը ջախջախվեցին և դուրս մղվեցին տարածաշրջանից:³⁸ Սակայն սկզբնական շրջանում ձեռք բերված հաջողությունները չամրապնդվեցին նոր հաղթանակներով:³⁹ Հայկական ուժերի պառակտման

³² Նույն տեղում:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 69:

³⁴ Տե՛ս ժամանակագրության Ստեփաննոսի Օրպէլեանի, հավելված, էջ 40-43:

³⁵ Դրանք էին Քիրս (Կից), Աջբեջ, Լևազ (Լեվանք), Թաղամեր (Թաղամայրի) գյուղերը, որոնք ժամանակին վկայվել են Սյունիքի տասներկու գավառների եկեղեցու հին հարկացուցակում՝ Չորք և Արևիք գավառներում (տե՛ս **Ստեփաննոս Օրպէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս 1910, էջ 521), Չափնիի և Արծանաքարի կողմերում գտնվող գյուղերը, ինչպես նաև Քուրդլարն և Շահայպակլուի բնակավայրերը (Դաւիթ-բէկ, էջ 122-124, 131-135, 150, 156-157, 164):

³⁶ **Լեռ**, երկերի ժողովածու, 3, էջ 165:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Դաւիթ-բէկ, էջ 123-124, 131, 135, 150, 156-157, 164:

³⁹ Դ. Ա. Կնյազյանը, անդրադառնալով ազատագրական պայքարի պարտության պատճառներին, նշում է, որ գլխավոր պատճառները թուրքական մեծ ուժերն էին, հայկական վերնախավի մեջ ծագած դավաճանությունը, զորապետների միջև սկսված երկպառակությունը և երկարատև պատերազմական գործողությունները, որոնք քայքայել էին երկրամասի տնտեսությունը: Միաժամանակ, որպես ազատագրական պայքարի պարտության հիմնական պատճառ, հետազոտողը համարում է երկրի ներքին և արտաքին ընդհանուր տնտեսական ու քաղաքական անպաստ իրադրությունը (տե՛ս **Դ. Ա. Կնյազյան**, նշվ. աշխ., էջ 161-162): Նկատենք, որ Եղվարդի դաշտում կրած պարտության հետևանքով (տե՛ս Դաւիթ Բեկ, էջ 158) չհաջողվեց վերացնել Կապանի իշխանության և Ղարաբաղի միջև գոյացած սեպը՝ Բարկուշատի օլքան, որը տարանջատում էր անկախության ուղին բռնած այդ երկրամասերի հայությանը: Նախիջևան գետի ափին տեղի ունեցած անհաջող ճակատամարտի (տե՛ս Դաւիթ Բեկ, էջ 153) արդյունքում հայկական ուժերը չկարողացան գրավել նաև պարսկական տիրապետության երկրորդ կարևոր հենակետը՝ Նախիջևանը, որն իր հերթին բաժանում էր հայկական իշխանու-

հետևանքով օտարամուտ տարրը կարողացավ պահպանել իր ունեցած հենակետերը Բարկուշատում և Ղարադաղում, ինչպես նաև հարակից շրջաններում՝ Օրդուբադում և Նախիջևանում:⁴⁰ Հետագայում դրանց միջոցով ընդարձակվեց այդ տարրի բնակության գոտին և խաթարվեց երկամասի ժողովրդագրական ընդհանուր պատկերը:

THE LAND OF KAPAN ACCORDING TO THE LIST OF THE SEE OF TATEV

A. H. GHARAGYOZYAN

According to the studies the territory of provinces mentioned in the list of the See of Tatev was a large Armenian-populated land surrounded by the mountain range of Zangezur, Karabakh and Kharadagh and the northern side of the three-peak upland and was known as Khapan or Khapanat (the beginning of the 17-th century). The provinces of the See of Tatev had their governors which were the descendants of the old rulers. In the first quarter of the 17-th century there were about more than half million Armenian inhabitants in Khapan.

ЗЕМЛЯ КАПАНА ПО СПИСКУ ЕПАРХИИ ОКРУГА ТАТЕВ

A. A. КАРАГЕЗЯН

Исследования показывают, что по списку податных деревень Татевского монастыря (начало 17 века), территория указанных провинций представляла из себя населенную армянами, обширную, окруженную горными хребтами Зангезура, Карабаха и Каралаха и северной границей Еракатарской горы, которая известна под названием Хапан или Капан). Провинции, составляющие епархию, имели своих правителей, которые являлись потомками древних княжеских родов. В первой четверти начала 17 века армянское население земли Капана составляло свыше полутора миллиона человек.

թյունը պարսկական տիրապետության տակ գտնվող հայաբնակ մյուս շրջաններից և իր վերահսկողության տակ պահում Արաքսի հովտով անցնող կարևոր մայրուղու զգալի հատվածը: Բնականաբար այդ, իսկ հեռանկարում նաև մյուս հենակետերի՝ Երևանի և Գանձակի բերդերի զրավումը և դրանց կայազորների ոչնչացումը կարող էր հանգեցնել հայկական իշխանության ընդարձակմանը և ամրապնդմանը: Սակայն իրադարձությունների աննպաստ ընթացքի և այլ գործոնների պատճառով Կապանի անկախ իշխանությունը դադարեց գոյություն ունենալ:

⁴⁰ Սեֆևիդների օրոք Նախիջևանը կոչվել է Թուման-ե Նախիջևան և ընդգրկել է պատմական Նախիջևան, Շահբուզ, Ալինջա, Ազադ Զիրան, Դարե-յե էլեգիա և Սիսաջան գավառները (Հայ ժողովրդի պատմություն, էջ 25):